Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն N12 -ՀԽ

ՀՀ բնապահպանության նախարարին կից հասարակական խորհրդի նիստի

08.12.2017թ. ք.Երևան
ժամը 17^{00}

ՄԱՍՆԱԿՑՈՒՄ ԷԻՆ

Ա.Մինասյան ՀՀ բնապահպանության նախարար-խորհրդի նախագահ

ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Խ.Հակոբյան ՀՀ բնապահպանության նախարարի տեղակալ
Կ.Դանիելյան «Հանուն մարդկային կայուն զարգացման ասոցիացիա» ՀԿ
Վ.Հակոբյան «Դեմետրա-էկո» բնապահպանական-գյուղատնտեսական ՀԿ նախագահ
Ա. Իսկոյան «Շրջակա միջավայրի պահպանության իրավական կենտրոն» ՀԿ
Ա. Միրզոյան «Սպառողների աջակցման կենտրոն» ՀԿ
Ա. Համբարձումյան «Խազեր» էկոլոգոմշակութային ՀԿ նախագահ
Ս. Այվազյան Երևանի Օրհուս կենտրոնի համակարգող
Գ.Օգանեզովա ‹‹Հայկական բուսաբանական ընկերություն›› ՀԿ
Ի. Զարաֆյան «Էկոլուր» տեղեկատվական ՀԿ
Մ.Զաքրյան «Հնարային իրազեկման և մոնիտորինգի կենտրոն» ՀԿ
Ժ.Գալյան «Հայկական էկոտուրիստական ասոցիացիա» ՀԿ
Ա.Վարդանյան ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության պետ:

Հրավիրված էին՝

Հ. Պարսամյան ՀՀ բնապահպանության նախարարի իրավախորհրդատու
Ա. Պեպանյան ՀՀ բնապահպանության նախարարի խորհրդական

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ

Հարց 1. Հայաստանում բնապահպանական մշակույթի ձևավորման հարցերը

Հարց.2 ՀՀ-ի կողմից Օրհուսի կոնվենցիայի դրույթների 2014-17թթ կատարման խնդիրները և առաջարկների քննարկում

Խորհրդի նախագահ Ա. Մինասյանը հաստատման ներկայացրեց նիստի օրակարգը:
Ելույթով հանդես եկավ Հ. Սանասարյանը-Նշեց, որ առաջարկել էր խորհրդի օրակարգում ընդգրկել «Լիդիան Արմենիա» ընկերության կողմից Ամուլսարի հանքավայրի շահագործմանը վերաբերող հարց, ինչը օրակարգում չկա:

Պարզաբանմամբ հանդես եկավ Ա. Մինասյանը-տեղեկացրեց, որ 2018թ հունվարին նախատեսված է միջազգային փորձագետների և «Լիդիան Արմենիա» ընկերության մասնագետների հանդիպումը, որի ժամանակ քննարկվելու են մասնագիտական հարցեր և առաջարկեց հարցով շահագրգռված խորհրդի անդամներին մասնակցել քննարկանը:

Ելույթով հանդես եկավ Ա. Պեպանյանը- Վերլուծեց Հայաստանում բնապահպանական մշակույթի ներկա վիճակը և տեղեկացրեց այդ ուղղությամբ գերատեսչության իրականացրած միջոցառումների մասին: Ներկայացնելով խնդրի պատճառների վերաբերյալ դիտարկումները՝ Արծրուն Պեպանյանը նշեց, որ հասարակության մոտ բնապահպանական մշակույթի ձևավորմանը նպաստելու համար իրականացվում են էկոկրթական և հանրային իրազեկման ծրագրեր, մշակվում է էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարությունը, ձևավորվել է «Պատանի բնասեր» ակումբը, Հայաստանի նկարիչների միության հետ կնքվել է համագործակցության հուշագիր, որի շրջանակներում արդեն իրականացվել են մի շարք միջոցառումներ, էկոկրթական բազմաթիվ ծրագրեր են իրականացվում դպրոցականների և ոլորտում որոշում ընդունողների շրջանում: Նախարարությունն աջակցում է բնապահպանական խնդիրներով մտահոգ ակտիվ երիտասարդներին, ովքեր խումբ են ձևավորել և նպատակային գործունեություն են ծավալում բնապահպանական հիմնահարցերի վերհանման և լուծումներ գտնելու ուղղությամբ: Գերատեսչությունը նաև աջակցում է բնապահպանական թեմաներով գրող լրագրողների կողմից ձևավորած «Էկո-մեդիա ցանցին»՝ նրանց համար կազմակերպելով սեմինարներ և այցեր բնության հատուկ պահպանվող տարածքներ՝ նպատակ ունենալով միասնաբար մշակել և իրականացնել բնապահպանական մշակույթի ձևավորմանը նպաստող ծրագրեր:

Ելույթով հանդես եկավ Ա. Մինասյանը- Առաջնային համարեց ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթության միջոցով հասարակության լայն շերտերի մոտ բնապահպանական մշակույթի ձևավորումը:

Հարցով հանդես եկավ Հ. Սանասարյանը- Ցանկացավ իմանալ, թե ի՞նչն է հիմք հանդիսացել էկոլոգիական կրթության և դաստիարակության զարգացման ռազմավարության նախագծի մշակման համար:

Պարզաբանմամբ հանդես եկավ Ա. Վարդանյանը- Նշեց, որ 2009թ-ին ընդունվել էր Բնապահպանական կրթության, դաստիարակության և իրազեկման ամբողջական միասնական ազգային համակարգի ստեղծման հայեցակարգը: Իսկ ռազմավարության մշակմամբ խնդիր կա զարգացնել էկոլոգիական կրթության արդյունավետ միջոցները՝ ոչ ֆորմալ և ինֆորմալ կրթությունը, ինչպես նաև համակարգել միջազգային ծրագրերի շրջանակներում իրականացվող էկոկրթական բաղադրիչները:

Ելույթով հանդես եկավ Կ. Դանիելյանը-Դրական գնահատեց ռազմավարության նախագիծը և նշեց, որ մեծ ծավալի աշխատանք է տարվել՝ հանրապետությունում էկոկրթության վիճակն ուսումնասիրելու և լուծումներ տալու համար: Կարևորելով ոչ ֆորմալ կրթությունը՝ շեշտեց կրթության բոլոր մակարդակներում էկոկրթության զարգացման անհրաժեշտությունը:

Ելույթով հանդես եկավ Գ. Օգանեզովան- Նշեց, որ էկոկրթության վիճակը բարելավելու համար անհրաժեշտ է գործողություններ իրականացնել և ներքևից և վերևից: Իսկ բնապահպանական մշակույթ ձևավորելու համար պետք է սկզբից լուծել սոցիալական խնդիրները:

Ելույթներով հանդես եկան Ա. Իսկոյանը, Ժ. Գալյանը, Մ. Զաքրյանը, Ի. Զարաֆյանը, Ա. Միրզոյանը-Ելույթներում կարևորվեցին էկոլոգիական կրթության մակարդակի

բարձրացմանն ուղղված միջոցառումները և նախանշվեցին ակնկալվող արդյունքների հասնելու ուղիները:

Առաջարկով հանդես եկավ Հ. Սանասարյանը- Առաջարկեց Կայուն զարգացման հայեցակարգին, ինչպես նաև հանքարդյունաբերության ոլորտում հարկային վարչարարության բարելավմանը վերաբերող հարցերը ներառել Խորհրդի առաջիկա նիստերի օրակարգում:

Առաջարկով հանդես եկավ Ա. Մինասյանը- Կ. Դանիելյանին առաջարկեց Կայուն զարգացման հայեցակարգի վերաբերյալ հարցի մասին զեկույց ներկայացնել, իսկ Հ. Սանասարյանին՝ հանդես գալ հարակից զեկույցով:

Ելույթով հանդեց եկավ Հ. Պարսամյանը-Անդրադարձավ Հայաստանի կողմից Օրհուսի կոնվենցիայի դրույթների 2014-17թթ. կատարման ընթացքին: Նիստի մասնակիցներին ներկայացրեց <<Շրջակա միջավայրի հարցերի առնչությամբ տեղեկատվության մատչելիության, որոշումներ ընդունելու գործընթացին հասարակայնության մասնակցության և արդարադատության մատչելիության մասին>> Օրհուսի կոնվենցիայի ազգային զեկույցի պատրաստման ընթացքը: Խորհրդում ընդգրկված հասարակական կազմակերպությունների առաջարկով հրապարակեց սույն թվականի սեպտեմբերի 11-15-ը Մոնտենեգրոյի Հանրապետության Բուդվա քաղաքում տեղի ունեցած Օրհուսի կոնվենցիայի կողմ երկրների 6-րդ հանդիպման արդյունքները: Նախարարի իրավախորհրդատուն անդրադարձավ նաև հանրային իրազեկման, բնապահպանության ոլորտում որոշումներ կայացնելու գործընթացին հանրության մասնակցության և արդարադատության մատչելիության հարցերին:

Որոշվեց

Առաջիկա նիստերից մեկի օրակարգում ընդգրկել Կայուն զարգացման հայեցակարգը, որի հիմնական երեք բաղադրիչներից մեկը բնապահպանական է:

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ **Ա. ՄԻՆԱՍՅԱՆ**

Արձանագրեց
Ա.Վարդանյանը